ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՖԵԼԻՔՍ ԹՈԽՅԱՆ—Քաղաքացիների սահմանադրական ստատուսի զարգացումը Հայկական ՍՍՀ-ում (1920—1980 թթ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, 192 էջ։

Գրքի երեք գլուխներում վերլուծվում են ՀՍՍՀ առաջին սահմանադրության (1922 թ.) կարևոր իրավական ինստիտուտներից մեկի՝ քաղաքացու սահմանադրական ստատուսի, կազմավորումը, նրա հիմնական օրինաչափությունները, ցույց են տրվում սոցիալիստական պետության և քաղաքացու փոխհարաբերությունները, Սովետական Հայաստանում քաղաքացու գլխավոր իրավունքների, ազատությունների, պարտականությունների սոցիալական արժեքն ու նշանակությունը, բացահայտվում են քաղաքացու իրավունքների մարքս-լենինյան աշխարհայացքի պատմական առավելությունները։ Տրվում են մարդու իրավունքների պաշտպանության բուրժուական գաղափարախոսության քննադատությունն ու սոցիալիստական հասարակության մեջ սահմանադրական-իրավական ինստիտուտի դեմոկրատական հիմքերն ու մարդասիրական էությունը։

Գիրքն ունի վերջաբան, օգտագործված գրականության ցանկ և ծանոթագրություններ։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Վ. Ռ. Նազարյանը։

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԹԱՇԼՅԱՆ — Երկերի լիակատար ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, 563 էջ։

Առաջին անգամ ընթերցող հասարակայնությանը ներկայացվում է գրող, ուսուցիչ, թատերական ու հանրային գործիչ Մկրտիչ Պեշիկթաշլյանի առ այսօր հայտնի ու մատչելի երկերի լիակատար ժողովածուն, որն ընդգրկում է հեղինակի սիրո, բնության ու հայրենասիրական բանաստեղծությունները, մի քանի թատերգություններ, չորս էքս և երկու տասնյակի հասնող նամակներ, ինչպես նաև Պեշիկթաշլյանի գրաբար բանաստեղծությունների աշխարհարար թարգմանությունները (Արշակ Չոպանյանի թարգմանությամբ, «Հավելված» բաժնում)։

Ժողովածուում տրված է տարբեր քերթվածների ստեղծագործական պատմության պատկերը՝ ըստ տարբերակների և բնագրային տարբերությունների։

Գիրքն ունի համառոտագրություններ, ծանոթագրություններ, անվանացանկ։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Պ. Հ. Հակոբյանը։

ԳԵՎՈՐԳ ՎՈՂՈՍՅԱՆ — Ինֆորմացիայի հավաքման մեթոդները սոցիոլոգիայում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1987, 166 էջ։

Մենագրության մեջ տրվում է սոցիալական ինֆորմացիայի հավաքման մեթոդների ծավալուն պատկերը։ Գրքի հինգ գլուխներում շարադրված են հարցման մեթոդները՝ հարցազրույցը, անկետավորում, հեռախոսային հարցում, հարցերի տեսակները և բովանդակությունը, փորձագետների հարցման մեթոդները, սոցիոլոգիական դիտման տեսակները, պլանը, հնարավորությունները, ուսումնասիրված են սոցիոլոգիական փորձերի տեսակները, էությունը, փորձը՝ որպես ինֆորմացիայի հավաքման մեթոդ։ Հայրենական և արևմտյան սոցիոլոգիայի փորձից բերված բազմաթիվ օրինակների, փաստաթղթերի հավաստիությունը և հուսալիությունը վերլուծված են հեռանկարային ուղիների տեսանկյունից։

Գիրքն ունի ամփոփում և ծանոթագրություններ։

Պատասխանատու խմբագիրն է Ա. Ա. Նալչաջյանը։

ԽԱՉԱՏՈՒՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ — *Սովետական Հայաստանի բնակչության և բնակավայրերի աշխարհագրություն (1920—1980), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 198 էջ։*

Գիրքն ունի երկու բաժին՝ բնակչության աշխարհագրություն և բնակավայրերի աշխարհագրություն։

Առաջին բաժնի վեց գլուխներում ցույց են տրվում բնակչության աշխարհագրության կապը ազգագրության և ժողովրդագրության հետ, 1920—1980 թթ. Սովետական Հայաստանի բնակչության բնական վերարտադրությունը, թվաքանակի փոփոխությունները, ուրբանիզացիայի ազդեցությունը ծնելիության վրա։ Լուսաբանվում են բնակչության կառուցվածքի, կրթական մակարդակի, սեռատարիքային կազմի, քաղաքային և գյուղական բնակչության ֆիզիկական և մտավոր աշխատանքով զբաղվածության, հայրենադարձության ու բնակչության տարաբնակեցման և ռելիեֆի փոխադարձ պայմանավորվածության հետ կապված հարցերը։

Երկրորդ բաժնի երեք (7—9) գլուխներում նկարագրված են բնակավայրերի տեսակները, քաղաքները նախասովետական Հայաստանում, ուսումնասիրված են քաղաքների զարգացումը սովետական՝ նախապատերազմյան և հետպատերազմյան տարիներին, քաղաքային բնակավայրերի աշխարհագրական դիրքը, տեղաբաշխման փոփոխությունները, տրված է գյուղական տարաբնակեցման համառոտ բնութագիրը։

Գիրքն ունի հավելված և ծանոթագրություններ։

Գրքի պատասխանատու խմբագիրն է Ռ. Մ. Հովսեփյանը։

ԲՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ *(գիտական աշխատությունների ժողովածու), VIII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 296 էջ։*

Ժողովածուում զետեղված են բնագիտության և տեխնիկայի մեթոդաբանության պատմության, ֆիզիկա-մաթեմատիկական, կենսաբանական, տեխնիկական, բժշկական, գյուղատնտեսական գիտությունների և երկիր մոլորակի մասին հոդվածներ։ Դրանցում խոսվում է Հայաստանում ֆիզիկայի զարգացման ուղղությունների, XIX դ. հանրահաշվի հայերեն տպագիր դասագրքերի, Հակոբ Ղրիմեցու տիեզերական հայացքների և Հովհ. Երզնկացու «Յաղագս երկնային շարժմանն» աշխատության նորահայտ ձեռագրի մասին։ Երկրի մասին հոդվածներում պատմվում է XIX դ. Հայաստանում ռուս երկրաբանների հետազոտությունների, հնադարում ոսկե ցրոնների շահագործման, Անդրկովկասում Վլ. Բոգաչովի գործունեության, հայ բնափիլիսոփայության մեջ աշխարհի նախանյութի, Ան. Շիրակացու աշխատություններում օդերևութաբանության և եղանակի կանխագուշակման հարցերի մասին։ Խոսվում է նաև Սովետական Հայաստանում բժշկական մանրէակենսաբանության, թերապիայի զարգացման, մալարիայի վերացման, XIX դ. Արևելյան Հայաստանում առողջապահության, միջնադարյան հայ բժշկապետների հայացքների մասին՝ ալերգիկ հիվանդությունների ու նրանց բուժման և բժիշկ Ասար Սերբաստացու վերաբերյալ։ Հետաքրքրությամբ են ընթերցվում Ուրարտուի շրջինարարական կառույցների, ծիրանենու հայրենիքի հարցին և գիտության գործիչներ՝ կենդանաբան Ավետիք Տեր-Պողոսյանին ու քիմիկոս Լևոն Ռոմինյանին նվիրված հոդվածները։ Հոդվածներն ունեն օգտագործված գրականության ցանկ։

Գրքի գլխավոր խմբագիրն է Գ. Բ. Պետրոսյանը։

ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ։ *Հոդվածների ժողովածու, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 340 էջ։*

Ժողովածուում զետեղված է 9 հոդված։ Դրանցում բացահայտվում են հայկական ռեալիզմի ուսումնասիրության հրատապ խնդիրները, սկզբնավորումը, պատմական ուղին, խոսվում է ռոմանտիզմի և ռեալիզմի սահմանագծի, ռեալիզմի առանձնահատկությունների մասին՝ Հակոբ Պարոնյանի երգիծանքում և ուրբանականների ստեղծագործություններում։ Լուսաբանվում են Հովհ. Թումանյանի ռեալիզմի մի շարք առանձնահատկությունները, այդ մեթոդի պայմանական ձևերը հայ ռեալիզմի համակարգում և նատուրալիզմի ուղղությունը հայ գրականության մեջ։ Հոդվածներն ունեն ծանոթագրություններ։

Խմբ. կոլեգիա՝ Էդ. Ջրբաշյան և ուրիշներ։